Ես մօտեցայ: Նա սկսեց քննել իմ կոկորդը:

— Փոքր-ինչ ուռուցք է գոյացել, բայց շուտով կանցնի, — ասաց նա, տալով ինձ մի ինչ-որ հեղուկ եւ մի օծանելիք, եւ պատուիրելով, որ առաջինով ներսից ողողեմ կոկորդս, իսկ երկրորդը՝ դրսից քսեմ:

— Այդ քաղաքում բժշկութիւնը նախ իմ վրայ փորձիր, — նկատեցի ես ծիծաղելով:

— Ո՛չ, այս րոպէիս մի հիւանդի մօտից եմ գալիս, պատասխանեց նա իր սովորական սառնութեամբ, — բայց խեղճը հազիւ թէ կապրի:

Նա վեր առեց իր եւրոպական լայնեզր գլխարկը եւ հեռացաւ՝ պատուիրելով ինձ հանգիստ մնալ եւ տնից դուրս չգալ: Ես մնացի սենեակի մէջ միայնակ:

Երեւում էր, որ վարպետ Փանոսը տանը չէր, եթէ ոչ՝ նա կը գար ինձ տեսնելու: Որդու փոխարէն եկաւ մայրը: Դա այն ճարպիկ, լեզուանի եւ աչքաբաց կանանցից մէկն էր, որ իր ընդունակութիւններով սքօղում է, մոռացութեան է տալիս տղամարդի անունը, եւ ամբողջ զաւակները հասարակութեան մէջ ճանաչւում են միայն մօր անունով: Նրան կոչում էին Սանամ, եւ վարպետ Փանոսը մօր անունով կոչւում էր Սանամի տղայ:

Նա մօտեցաւ ինձ այս խօսքերով.

Լսեցի հիւանդ ես, որդի, ո՞ր տեղդ է ցաւում, որդի, ասում են, կոկորդդ ուռել է. սուրբ տիրամայրը փարատութիւն տայ: Ես հիմա կը լաւացնեմ, մի վախիր, հէնց որ մատս դնեմ մի քիչ հուփ տամ, աստծոյ շնորհիւ կը լաւանայ: Անցեալ օրը մեր հարեւանի տղան էլ այսպէս էր, հէնց որ ձեռքս դիպաւ, իսկոյն լաւացաւ:

Պառաւն էլ ուզում էր նորից խեղդել ինձ: Ես, ի հարկէ, քաղաքավարութեամբ մերժեցի նրա բժշկական հնարները, յայտնելով, որ բոլորովին առողջ եմ զգում ինձ: Բայց նա դարձեալ չհանգստացաւ՝ զգուշացնելով ինձ, թէ քաղաքում «կապոյտ հազ» կայ, շատերի կոկորդը ուռչում է, շատերը մեռնում են, եւ միայն չափահասներն ազատւում են այդ «պատուհասից», իսկ երեխաների մէջ մեծ կոտորած է պատճառում:

— Այսոամենայնիւ, — վերջացրեց նա իր խրատները, — զգուշութիւնը լաւ բան է, — եւ խորհուրդ տուեց այցելել իր որդու գործարանը:

Ես զարմանում էի, ի՞նչ փրկակար ազդեցութիւն կարող էր ունենալ ներկարարի գործարանը «կապոյտ հազի» կամ մի կոկորդի ուռուցքի վրայ: Այդ մասին պառաւը ոչինչ չբացատրեց ինձ: Իսկ ես հետեւեցի նրա խրատին միայն այն մտքով, որ առիթ ունենամ տեսնելու գործարանը: